

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ

ՄԱՍԿ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԹՈՒԼԻՍԻ

Տարեկան գինը 10 բուրգի կէս տարվան 6 բուրգի
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисе, редакция «Маска».
Կամ Tiflis, Rédaction «Maschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տոն օրերէն):

Ճաշարարութիւնը ընդունվում է ամէն լիցուով:

Ճաշարարութիւնների համար վճարում են
խրատանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ԲՈՎԱՆԱԳՈՒԹԻՒՆ

Սպասողական դրութեան. — Ներքին Տեսչական
Թիֆլիս. Մասնաւոր. Յոյս տուէր ձեր եռանդը.
Նամակ Շուրջ. Նամակ խմբագրութեան. Ներ-
քին լուրեր. — ԱՐՏԱԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտա-
քին լուրեր. Հինգրորդի. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒ-
ԹԻՒՆՆԵՐ. ԲՈՎԱՆԱԳՈՒԹՅԱՆ «Tems» լրագրի
յօդուածը:

ՍՊԱՍՈՂԱԿԱՆ ԴՐՈՒԹԵԱՆ ՄԵՋ

Մեր հասարակութիւնը անհամբեր սպա-
սում է դպրոցական հարցի լուծման, որ-
պէս զի կարողանայ օր առօր կարգա-
դրութիւններ անել և պատրաստութիւն-
ներ տեսնել դպրոցներ բանալու համար
կարելիին չափ շատ կէտերով:

Դպրոց բանալը այնքան էլ հեշտ չէ,
որքան կարող է երևալ առաջին անգա-
մից. նա պահանջում է որոշ ծախքեր,
որոշ աշխատանք, որոշ կազմակերպու-
թիւն: Ենթադրւում է, որ հանգամանքի, որ
եղած դպրոցական կազմակերպութիւն-
ները խախտված են, այժմ նորից պէտք
է սկսել գլուխ բերել այն գործերը, ո-
րոնք մի ժամանակ իբրև նոր ձեռնար-
կութիւններ իրագործվել են կենտրոնի մէջ:
Չը կան այժմ մեծ թւով ուսուցիչներ,
որովհետեւ եղածները նուիրեցին իրանց
ուրիշ պարագայներին, իսկ նոր երե-
ւոյնները, աչքի առաջ չունենալով
դպրոցական ապագայը, գործելու նպա-
տակ, այլ ևս չը փորձեցին ուսուցչութեան
համար պատրաստվելու:

Նոյն իսկ այժմ, երբ միայն մի երկու
ամիս է մնացել մինչև նոր ուսումնական
տարին սկսվելը, մեր հասարակութիւնը
զեն որոշակի չը գիտէ թէ արդեօք նա
կարող է այժմանից սկսել պատրաս-
տութիւններ տեսնելու դպրոցի բացման
համար թէ ոչ: Եւ եթէ կան հէնց այժմ
էլ անհաւատութիւններ, որոնք կարող
էին նուիրել իրանց ուսուցչական գոր-
ծին, որոնում են ուրիշ պաշտօններ,
վստահ չը լինելով, որ նրանք տեղ կը
գտնեն դպրոցներում:

Մեր հոգևոր վարչութիւնը ներկայումս,
երբ արդէն խոստացվել է դպրոցների
վերաբացումը, պէտք է աշխատէ փու-
թացնել գործի ընթացքը և իր կողմից
հետամուտ լինել, որ չը դանդաղվի այդ
չափազանց կարևոր, կենսական և աւելի
բան հերթական խնդրի գործնական լու-
ծումը:

Մեր հոգևոր վարչութիւնը հասարա-

կութեան թէ անցեալ և թէ ներկայ գոր-
ծողներին հետ միասին կարող է շատ հեշ-
տութեամբ մշակել ծրագրերը յարմա-
րեցրած մեր ազգաբնակչութեան աճող
պահանջներին և այդպիսով զիջացնել
այն գործը, որ պուցէ առանձին խոր-
հրդակցութիւնների պէտք է յանձնվի
վերջնական ձևակերպութիւն ստանալու
համար:

Հասարակութեան համար մեծ հոգեկան
մխթանութիւն կը լինէր տեսնել իր
դպրոցները բացված հէնց այս աշնանը
Դպրոցները մեր հասարակութեան սիրե-
լիներն էին և նրանց կորուստը չափա-
զանց զգալի է եղել նրա համար: Եւ
հասարակութիւնը, որ դպրոցի դռները բաց-
վելը ամենաշուտ տօներէն մէկը կը լինի
մեր ժողովրդի համար:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ ՈՒ Լ

«Մշակ»-ի ընթերցողները գիտեն, որ եր-
բայեք հաւատարմատար Ս. Յարութիւնեան
մի հնարական հերքումով, որ ապրիլի 9-ի
տերուրդի «PASCETTE» լրագրի այս տարվայ
№ 104-ում, հրատարակւող Բաշի-Բէկ իրադարձի-
կապագոյցներին այն զրպարտութիւնները և
ստերը, որ նա աշխատել էր նոյն լրագրի մէջ
տարածել Նախկինում ուղարկելի դէպքերի ա-
ռիթմով հայերի դէմ: Ի թիւս անհիշելի տեղե-
կութիւնների, իրադարձիկ պնդում էր, որ հա-
յերը Բաշի-Բէկի գործը յօդուած են կրո-
նափոխ եղել և խառնութիւն ընդունել, իրանց
անձի և գրքի ապահովութեան համար:

Արդ, իրադարձիկ «PASCETTE» լրագրի վերջին
համարում (№ 114), պատասխանելով պ. Յա-
րութիւնեանին և առանց մի հատ օրինաւոր
փաստ բերելու պ. Յարութիւնեանի առանձնե-
րը ջրելու համար, գիտնում է մի նոր, վերին
աստիճանի ստեղծած մանկութիւն: Նա այս ան-
գամ ուղարկել յայտնում է, որ բաղադրեցի-
նները յօդուածները հաւատարմաց են եղել և
ընդունել ինչպէս այն պատուով, որ գրողն
մուտքովանցելի դէմ Ուսումնասիր թոյլ տրի-
ստեղծների գալոյթը եւ վարկաբեկ անեն մու-
տուկանցիները:

Մշակից աւելի ստոր խաղախութիւն մի
մարդի կողմից, որ թոյլ է տալիս համարել
իրան ամառի սպասուոր, անկարելի է:

«PASCETTE» լրագրի խմբագրութիւնը, ապե-
լով այդ նամակը, չէ կարողացել նոյնպէս պա-
հել իր գալոյթը և մի առաջնորդող յօդուա-

ծով մերկացրել է այդպիսի սահմարձակ նեն-
գութեան քոյրը անհիշելիութիւնը:

«Յաւալի է կարգալ լուրերը հեռաւոր հա-
րաւային ծայրից, առում է լրագրից: Ար-
տասուք և արեւն խառնվել են: Միս մեղադ-
րանքներ, որ հայերը և մուսուլմանները մի-
մեկից վրա բարդում են, անցնում է ամենայն
հաւանականութիւն: Սակայն քննելով անա-
չառապէս, իսկաւր հիմք չունի բառնալ իր
հետեւողների վրայից խորին մեղաւորութեան
ծանրութիւնը: Նրանք, իսկաւր հետեւողները,
մտրվեցին Լաւրանովի և Հանթօյի ժամանակ
բազմաթիւ քրեատնիկներ, փաղկաւոր պե-
տութեան մէջ, Եթէ նրանց միայն աշխատու-
թիւն արդի, նրանք մէկ մաս ևս դիմելու կը
կուտակեն: Այդ ամենին չէ հակառակ ժամա-
գարէ՛ք» և զիջել և անհիշող դաւաճների արմա-
տական արկերի պնդելին, համապատասխանում
է մասնակցի մէջ զարթնած տրամադրու-
թեան: Վերջինը այնքան լաւված է, որ նոյն
իսկ մի հայ թշուառ գիւղի կողմից օտար
թշնամական հաւատը յանկարծ ընդունելը
մուսուլմանները հակված են բացատրել նրանով
թէ այդ հայերը չար դիտարկութեամբ են
կատարել, որպէս զի իբր թէ գրողն բաղա-
դարէր Նախկինի գալոյթը (1): Դրանից ա-
ւելի հեռուն գնալ անկարելի է:

Եւ ճշմարիտ, որպէս աւելի դաւաճանի
ճշմարտութեան ամենաաւարտական սկզբունք-
ներին անկարելի է:

ՃՈՅՑ ՏՈՒՆԻՔ ԶԵՐ ԵՆՈՒՆԴԸ

Մենք ամենքս գիտենք, որ Նախկինի դա-
ւառի հայ ժողովուրդը, գիւղական և հողագործ
ազգաբնակչութիւնը սոսկալի փառանք կը կոչ-
վել ինչպէս ժամանակ: Գողգոթայի ան-
թաւր թաւր 34 գիւղերից, 19 գիւղերի բնակիչ-
ները թուրք էին իրանց տեղիներ, փախել և
կապտաւոր գտել բաղադրում կամ այլ գիւղե-
րում: Յունիս 20-ից սկսած, վստահացած
իշխան Նախկինի կարգադրութեան և ձեռք
առած ազդու միջոցների վրա, այդ 19 գիւ-
ղերի բնակիչները սկսեցին վերադառնալ ի-
րանց կողմնակցած, թաւանակած, ամայացած
տեղերը: Նրանք վերադառնալ իրանց օջախը,
մայրենի որրորդ նորից վառելու, նորից շէ-
նացնելու, բայց, Աստուած իմ, վերադառնալ
հրապիտ դրութեան մէջ: Անհաւատաւ Միւսրոպ
վարդապետը պատմում է, թէ նրանք վերա-
դառնալ ոտաբորելի, երկրանները շալակած,
փայտի վրա յենված, մեղի, բաղադր: Իրանց
չէն, շինական բարեբեկութիւն լի տեղեր նրանք
գտան ամայի, իրանց արտերը՝ լքված, ոտնա-
կուխ եղած, ոչ մի գրաստ, ոչ մի անասուն,

ոչ մի կով, ոչ մի ձի, ոչ մի էշ, ոչ մի ոչխար,
ոչ մի երկրագործական գործիք: Տան մէջ ոչ
մի աման, ոչ մի կուտ, ոչ մի դաշտակ, ոչ մի
խնոց, ոչ մի կաթնալ, ոչ մի անկողին, վեր-
մակ, բարձ, Առուից շուր բերելու համար մի
հասարակ կաւէ սափոր անգամ չունեն:

Եւ ահա այդ կարօտեալներին պէտք է օգ-
նութեան հասնել, պէտք է աւալ նրանց հա-
գուստ, անօթ, կուտ, սափոր, վերմակ, բարձ,
խնոց, կաթնալ, երկրագործական գործիքներ,
մի խօսքով ապրելու և աշխատելու ամենաան-
հրաժեշտ իրերը: Թիֆլիսի նպաստամատոյց
յանձնաժողովը հոգ է տանում հայթայթել
երկրագործական գործիք, երկաթեղէն, ալիւր,
բայց հագուստ, անօթ, մանր-մունք իրեր, վեր-
մակ, սիւնոց—այդպիսի իրեր գնելու, այն ևս
19 գիւղերի համար, ոչ մի գրամ չի բաւել:
Սակայն եթէ ամեն մի անձն, ամեն մի տուն
իր ունեցած աւելորդ անային իրերից մասն և
բաժին հանէ այդ թշուառներին—այն ժամա-
նակ կը հաւաքվի իրերի անհղին քանակու-
թիւն, որով կարելի է փոքր ի շատէ թե-
թեանք նրանց ծանր վիճակը:

Երևանը, ինչպէս կարգացրին «Մշակ»-ում,
արդէն կատարել է իր պարտը: Երկրագործ
վագոն տնային իրեր են հաւաքել և ուղարկել:
Թող Թիֆլիսն ևս շտապէ կատարել իր
պարտը: Գովաւսի Փոխարքան թոյլտուութիւն
է տուել Միւսրոպ վարդապետին տնային ամեն
տեսակ իրեր հաւաքել:

Ո՞վ մեղանից չունի տանը աւելորդ հագուստ,
տնային իրեր: Մենք համոզված ենք, որ ա-
մեն մարդ կը շտապէ ազատվել այդ իր հա-
մար աւելորդ՝ բայց Նախկինի հայ կարօ-
տեալ գիւղացիների համար ամենաանհրաժեշտ
իրերից:

Թիֆլիսի Հայոց Բարեգործական ընկերու-
թեան վարչութիւնը հաճութեամբ մեր տրա-
մագրութեան առկ է գրել իր գրասենեակը,
ուր ամեն նուիրատու կարող է տանել և
յանձնել իր նուիրելի իրերը: Հարկաւոր է
միայն, որ մի քանի օրերը չեն և պատանի-
ներ յանձն անեն օրական մի քանի ժամ
հերթապահութիւն անել այդանդ ցուցակա-
գրելու, դասաւորելու և անհաւորելու համար
բերվող իրերը, ինչպէս այդ արել են Երեւա-
նում:

Համոզված ենք, որ այդպիսի օրերը չեն,
պատանիներ և երիտասարդներ շատ կը գտնա-
վեն: Թող նրանք յայտնեն իրանց ցանկութիւնը:
Ուրեմն, Թիֆլիսից հայեր, շտապեցէ ձեր
տնային իրերով, աւելորդ առարկաներով թե-
թեանք ապրիլի 1-ին կէսօրը և դառն վե-
ճակը: Սպասում ենք:

Հ. Առաքելեան

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

«TEMPS» ԼՐԱԳՐԻ ԹՈՒՆԱԳՈՒԹՅԱՆ

I

Ո՞վքեր են Գովաւսի խառնակութիւնների
գլխաւոր մեղաւորները:

Եւ յաճախ լսեցի, որ մեղաւորում էին հա-
յերին: Նրանք բազմաթիւ են Գովաւսում. նը-
րանց չեն սիրում: Գառաւարտութիւնը, վրա-
ցիւնը և մահադատականները՝ թաթար, չէրքեզ
կամ բերդ նրանց բարեկամ չեն: Ինչի մէջ
են մեղաւորում հայերին:

Նրանք օրթոքս չեն, այլ, ինչպէս յայտնի
է, ունեն մի իրենուրոյն, ինքնազուրկ Եղեղե-
ցի, որի պէտք է Գովաւսում, նստում է էջ-
միւսում, Երևանի մօտ: Այդանդ է հայկա-
կան վարդի թագաւորութեան կենտրոնը: Եր-
կար ժամանակից ի վեր Հայաստանի թագա-
ւորութիւնը անհետացել է, բայց հայերը մը-
նացել են: Նրանք գոյութիւն ունեն ամբողջ
Արեւելում—մեծ մասամբ Գովաւսում, ինչպէս և
Թիւրքից Հայաստանում: Խելացի են ու գոր-
ծունեալ. հետեւաբար նրանց մեղաւորում են
արագորէն հարստանալու մէջ, ի քնա այն
գիւղացի, ինչուստիական կամ վաճառական

ազգաբնակչութիւններին, որոնց մէջտեղ ապ-
րում են: Թիֆլիսում, օրինակ, հարստութիւնը
անցել է հին կալուածատէր, շալալ, անկարգ
վրացիների ձեռքից նորից հայերին, անյա-
գուրդ և խնայող: Այդպիսից է առաջ գալիս
անհաւատացած վրացիների ատելութիւնն
ու ուր հարստացած հայերի դէմ: Եւ այդտե-
ղից մի քանի էր մնում, որ հայերին ամբաս-
տանելին երկրում գործվող ամեն չարքիքի իբրեւ
պատասխանատու: Այդ քայլն ևս արդի:

Հայերը գտնվում են այն ամեն տեղերում,
որ ատելութեան գործ կայ: Հրեաների նման,
նրանք զերազանց են դրամի առուարի մէջ:
Եւ դժբաղդութիւն ունեն յաճախ աշխուրթիւն
գտնելու: Միթէ կարելի է դրան հանդուրժել:
Եւ, հասկանալի է, որ նրանց մեղաւորում են,
որ պատերազմաւոր չեն, արեւութիւն չու-
նեն, վախկոտ են: Եւ այդ մեղաւորանքները,
թուում է թէ հիմնաւոր են:

Հաւատացնում են նոյնպէս, որ նրանք պա-
րագում են վաշխառութեամբ և անխնայ վե-
րաբերում են ցոյց տալիս դէպի նրանց, ո-
րոնց կործանման պատճառ են դառնում: Որ
երբեմն զեղծումներ են գործվում, անկասկած
է: Բայց օրինակով ճշմարտութիւնը այլ է:
այնպիսի ազգաբնակչութիւնների մէջ, որոնք
սարսափում են աշխատանքից, հայերը հրա-

շալիքէն գործունեայ են. այնպիսի անձերի
մէջ, որոնք գործ չեն հասկանում, հայերը սի-
րում են գործել և աշխուրթում են. շալալ անձերի
մէջ, նրանք խնայող են: Անհաւատաւ աշխու-
թեան իսկական պատճառները, ահա իսկական
պատճառները նրանց դէմ գրգռող ատելու-
թեան:

Այս ատելութիւնները յազուրդ են ստանում
մասնաւոր շփոթ ժամանակներում, շատ աւե-
լի հեշտութեամբ, շնորհիւ այն բանի որ նը-
րանք արեւութիւն չունեն: Եւ յիշում եմ իմ
պարսիկ ծառայի հետեւալ խօսքերը. «Սա մի
հայ է, պիտի թաղեն»: Ահա հոգեկան ընդհա-
նուր դրութիւնը այն ժողովուրդների, որոնց
մէջ հայերը ապրում են: Հայերը ընդհարում-
ներ ու կռիւներ չեն սիրում: Բազում, մի
պահական ինձ պատմել է, որ նա կոտորած
ներէ ժամանակ տեսել է մի թաթարի, որ
մայրի վրա չորս հայի փորոտիքն է թափել
դաշտում: Հայը իր պաշտպանութեան համար
նուր է գործ ածում: Սա համապատասխա-
նում է նրա բնաւորութեանը: Նա իր տան մէջ
գիւղական գէշերը է պատրաստում և պաղա-
րիւնով վրէժ է հանում: Երևանում, ուր հայե-
րը մեծամասնութիւն են կազմում այս օրէիս
սպանել են առաւելի շնորհիւ մեծ թւով թա-
թարներ:

Ապա թղթակիցը մի քանի տեղեկութիւն-
ներ հաղորդելով հայերի ունեցած դժբախ-
թիւնների մասին, և այն մասին որ նրանք
գէշեր կրելու իրաւունք չեն ունեցել, շարու-
նակում է:

«Բայց և այնպէս ամենքին յայտնի է, որ
հայերը նախադրձակ չեն եղել երբեք, այլ
միշտ պաշտպանում են եղել: Այն նշանաւոր
ասացուածքը թէ «միշտ անդին մարդիկ են,
որ կոտորվում են» ոչ մի տեղ այնքան ճիշտ
չէ, ինչպէս Գովաւսում:

Գառաւարտական շրջանակներում այն հա-
մոզմունքն է տրեւում, թէ Գովաւսում բողա-
քական շփոթութիւնների լաւատաւը հայ գաղ-
տնի կոմիտէաներն են:

Իմ կարծիքով դա սխալ է:
Հայերը քաղաքականութեամբ են զբաղ-
վում, ճիշտ է: Բայց ո՞վ չի զբաղվում ներկա-
յումս Ռուսաստանում: Պէտք է նկատել ունե-
նալ սակայն, որ Գովաւսի այժման, անկարգ
դրութիւնից ամենից աւելի փառալուրդը
հէնց իրանց հայերն են լինում, և իսկապէս
անհասկանալի կը լինէր, որ նրանք նման
խելօք ու շրջահայեաց մարդիկ յօդուածիւն
ցոյց տալին մշտնջենաւորելու իրերի մի
այնպիսի շփոթ դրութիւն, որից, ամենից ա-
ւելի ու ամենից շատ առաւելները իրանք՝

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

Յուլիսի 10-ին

Նորերս Շուշու վարժարանից պատուաբեկաբար Գրիգոր-Աղա Միլիթ-Շահնա-զարեանը։ Նրա մասին լուրը կայծակի ա-բաղաբեկաբար տարածվել ամբողջ քաղաքում։ Բոլոր մայրերը, ամբողջ ինտելիգենցիան և շատ պատուաբեկ անձինք ժողովեցին գլխա-ւոր մզկիթում և իր գլուխ ունենալով դադիրին խոսեցին ժողովուրդը գնալ հանգուցեալի առ-նը, որտեղ Մուլա-Հուսէյն Ղազին կարճ ա-ղօթելուց յետոյ ընտրուց Գրիգոր-Աղային։

Հանգուցեալի թաղմանը նրա տունն էին հաւաքվել գրեթէ բոլոր շուշուցիները առանց ազգութեան և դասակարգերի խտրութեան, որտեղից նրա մարմինը զինուորական երա-ժշտութեան ուղեկցութեամբ տեղափոխեցին հայոց եկեղեցի և ամբողջ ճանապարհին ժո-ղովուրդական մասսայի թիւը հետզհետէ աճում էր։ Եկեղեցում ծիսակատարութիւնից յետոյ հանգուցեալի դագաղի վրա թուրքերէն ու հայերէն լեզուներով զգացված ճառեր ասացին Մակար եպիսկոպոսը, Աղա Աբգարեանի մուշ-տէի-Ջաղէն և Տէր-Միքայէլեան վարդապետը։ Զր հայորդիքով Մուշտէի-Ջաղէի ճառի ման-րամասնութիւնները, կասեմ միայն, որ նրա ճառը բոլոր ներկայ եղողներին վրա զօրեղ ապաւորութիւն թողցւեց և նա Ղուրանից արա-բերէն լեզուով կարդաց մի սուրա։ Հայերը և մասնագէտները սկսեցին դառն արցունք թափել։

«Ան պարոններ, այսպէս սկսեց Մուշտէի-Ջաղէն, ձեր առաջ դրված է բոլորից յարգ-ված, չափազանց մարդասէր և բարեհոգի Գրի-գոր-աղայի մարմինը մի դագաղում, որին շրջապատել են ամենքը առանց դասանութեան և ազգութեան խտրութեան։ Այս եկեղեցում խոնված ժողովուրդից գրեթէ իւրաքանչիւր մարդու դէմքը ցոյց է տալիս, որ մեզ ամեն-քին համար մի այդպիսի պայծառ և բոլորո-վին կրթված մարդու մահը ծանր և դժուար է։ Եւ ինչպէս և անկեղծ երախտագիտութեան խորին զգացմունքով այստեղ բոլոր ներկայ եղողներս խոստովում ենք նրա յիշատակի, հոգու բա-րութեան և մարդասիրութեան առաջ, հան-գիստ ունեցողները, բարի Գրիգոր-աղա»։

«Առիթից օգտվելով—շարունակեց իր ճա-ռը Աղան—ցանկանում եմ մի քանի խօսք էլ ասել Գովկասի դանաղան քաղաքներում եղած արեւմտի և եղբայրասպան կոտորածի առ-թիւ, որ բազմազան կամեցողութեան նիւթ դարձաւ մասնուրի օրգաններում, ուր դանաղան գոյնեցում է նկարագրվում։ Այդ կոտորածը, ինչպէս ձեզ արդէն յայտնի է, աննպատակ և անմիտ մի բան է, որ մեզ տանում է դէպի բարոյական և տնտեսական անկում, նա մի-այն խուլիգանների գործն է, մարդիկ, որոնք Աստուած չեն ճանաչում, կորցրել են իրանց մարդկային կերպարանը և դարձել են մար-դանման գազան։ Նրանք ամենուրեք յեղաշըր-ջում են ճշմարտութիւնը, որ մտածված ստի-բնաւորութիւն է կրում և որոնց նպատակն է միայն գրգռել խաւար մասսայի յուզմունքը և անկարգութիւններ խրախուսել։ Ժողովուրդ-ների մէջ թշնամութիւն սերմանողը, ըստ Ղուրանի, մարդասպանից աւելի վատ է։ Շու-շում, մեր մէջ մի քանի անգամ խորհրդակ-նայերն են լինում։ Ո՛ւմ են կոտորում—հայե-րին։ Ո՛ւմ ամենից աւելի կարող է առեօն-գործադուլներին և տնտեսական անկարգու-թիւններին—հայերը, որ կազմում են առե-արական և գործունեայ դասակարգը։

Հայերը, ընդհանրապէս, շահ ունեն, որ եր-կիրը խաղաղիկ և կարգը վերահաստատվի։ Նրանք ուրախ են, որ իշխան Լուի Նապոլեո-նը ներկայումս մեծ ջանք է գործ դնում Եւ-րոպայի նահանգում խաղաղութիւնը վերահաս-տատելու համար։ Նրանք ցանկանում են տեսնել քաղաքական արդար և հզօր մի կա-ռավարութիւն, որ պաշտպանէ նրանց։ Մին-չև այժմ ներկայ կառավարութիւնը նրանց հետ բարեացակամութեամբ չէր վարվել։

Եթէ հայերը չեն խառնակութիւնների պատ-ճառը, Գովկասում, հիվանդ են ուրեմն։ Պէտք չէ կարծել, որ շփոթութիւնները ինք-նաբերաբար առաջ եկան քաղաքներում և գիւ-ղերում։ Տնտեսական և քաղաքական ընդհա-նուր դրութիւնը շատ վատ, դարձել է։ Եւ գտնվեցին ճարպիկ անձինք՝ այդ դրութիւնից օգտվելու, նրան շահագործելու համար։ Դրանք սոցիալա-դէմոկրատներն և ոռոս ու վրացի յի-դափոխականներն էին։ Նրանք վաղուց պատ-րաստ էին։ Վերջերս տեղի ունեցող դէպքերը

ցութիւններ են տեղի ունեցել առաջիկայում քաղաքում ազգայնական անտաքօնիզմի հողի վրա սպասվելիք անկարգութիւնների մասին։ Այդ խորհրդակցութիւնների ժամանակ բոլորն եկել են այն համոզմունքին, որ մահմեդական-ները և հայերի մէջ և գոյութիւն ունեցող դա-րաւոր և դրացիական յարաբերութիւնները ոչ խախտվել են և ոչ էլ կը խախտվեն։ Մենք միշտ եղել ենք և այսուհետեւ էլ կը լինենք հովակասի միւս քաղաքների համար իբրեւ նախ, և ես հպարտութեամբ կարող եմ ձեռ-վկայել, որ մեր անկեղծ և շարի յարաբերու-թիւնները մասին վկայել են Նորին Սրբու-թիւն ամենայն Հայոց Կաթողիկոս Մկրտիչ Խրիմեանը և մեր բարձրագոյն Մուշտէի-Միկայել-Բալամ, Հայի-Միքայ Շահի աղան, երբ նրանք Շուշուէն էին։ Մենք մայրենաբար, հիմնվելով շարիաթի վրա, մի քանի անգամ ապացուցել ենք, որ հարկաւոր է վերջացնել այն թշնամութիւնը, որ հակասում է Մահմեդի վարդապետութեան, որ մահմեդականների և քրիստոնեաների մէջ ոչ եղել է և ոչ էլ ներ-կայումս գոյութիւն ունի թէ կրօնական, թէ ազգային և թէ տնտեսական թշնամութիւն։ Արդեւում եմ ձեռ թշնամութիւն անելու քրիս-տոնեաների դէմ, վերաւորել և քննադատել նրանց կեանքին, ասում է սուրբ Ղուրանի 85-րդ սուրայի 2-րդ գլուխը։ Գրիստոնեական ամ-բողջ աշխարհը գիտէ, որ մահմեդականները ճանաչում են նրանց քիւրճը և յարգում են քրիստոնեական եկեղեցին։ Իւրաքանչիւր մահ-մեղականի կրօնական պիտակցութեան համար եկեղեցին և աւետարանն էլ այնպէս սուրբ են, ինչպէս որ մզկիթը և Ղուրանը։ Անա թէ ինչ է ասում Ղուրանը թափվող արեան մա-սին։

ա) Ով մարդիկ, մի թափէք միմեանց ա-րեւում, չէ՞ որ դուք չէք կարող ստեղծել ա-մենաչնչին մի էակ։

բ) Մարդս ստեղծված է իմ կերպարանով, իսկ նրա վրայ ձեռք բացառնելը նշանակում է ինձ վերաւորել։

գ) Ամեն մի մեղք կարող է ներվել անկեղծ կրօնով, իսկ մարդասպանութիւնը—երբէք։

դ) Մարդասպանի բաժինը—յուսիսական դժոխքն է։ Ընդհանրապէս ճառարսուր իր ճառի մէջ շեշտեց նախկին բարի և մատիկ յարաբերութիւնների փոխադարձ օգտի դա-րափարի վրա, այնպիսի յարաբերութիւննե-րի, որոնք մասնաւորապէս այժմ հարկաւոր են վերոյիշեալ ազգերի համար, որպէս զի նը-րանք ձեռք ձեռք տալով միասին ընթանան կուլտուրական առաջադիմութեան շահով։ Եւ, իսկապէս, նա իր բարի խօսքով և գոր-ծերով խաւար մասսայի ուղեղի վրա բարեար-կերպով է ազդում և ստուրիկ պաշտպանում է շուշուցիների անխախտ խաղաղութիւնը։

Յետոյ Տէր-Միքայէլեան վարդապետը ասաց հետեւեալ կարճ ճառը. «Լինում են քաղաքներ, երբ մարդս զրկված է իր զգացմունքները արտայայտելու հնարա-ւորութիւնից։ Անա այդ սրբազան քաղաքնե-րը այժմ հասել են ինձ համար, երբ ես տես-նում եմ հայ և մահմեդական ազգաբնակու-թեան ամենալաւ մասը այս թաւր դադաղի շուրջը խմբված։

«Ախրճեք Աբգարեանի աղայի զգացված խօսքերը, նրա չափազանց ջերմեանք աղօթ-ցանկալի առիթը հայթայթեցին։ Նրանք կա-րողացան հիւանալի կերպով օգուտ քաղել շը-փոթ դրութիւնից իրանց դադափարները տա-րածելու և բերօղկատարական բէժիմի դէմ գործելու համար։ Նրանց գործակալները, է-միսէրները ման եկան գիւղերում և գրեցին գիւղացիներին ոչ միայն չը վճարել իրանց պարտքը, այլ և պահանջել իրանց տէրերի կալուածքները։ Նրանք առաջ բերին այն բաղմաթիւ գործադուլները, որ խանգարե-ցին քաղաքներում նորմալ կեանքը—նաւ-թային բանւորների գործադուլը, երկաթու-ղու պաշտօնեաների և բանւորների գործադու-լը, հանրակառքերի, կոնդուկտորների, կառա-պանների, սայլապանների, մագազինի ծառա-յողների, կին և տղամարդ սպասաւորների, սրճարանի և ճաշարանի ծառայողների գոր-ծադուլը, փակեցին ուսումնական խաւարները, բազարները, և բառացի կերպով քաղցի մատ-նեցին Թիֆլիսը։ Բանւորների մի կորպորացիա չեղաւ, որ, օրինակ, Թիֆլիսում, գործադուլ չանէր

Անկարելի է այս բանում չը նկատել մի նախապէս կազմված, պատրաստված ծրագրի արգասիքները, նախապէս ձեռք առնված մի-ջոցների գործադուլութիւնն այնպիսի մարդկանց շնորհիւ, որոնք գիտեն, թէ ինչ են ուզում այս կարգի յարաբե յուզմունքներ վառ պա-

ըր, իմ մէջ զարթեցրին միատեսակ զգաց-մունք, որի շնորհիւ հասկացայ այդ քաղաքի և հանգուցեալի արժանաւորութիւնների մեծ նշանակութիւնը։ Շատ ցաւում եմ, որ ես չը գիտեմ մեր հարեան մահմեդականների լեզուն, բայց չը նայելով դրան, Ղազու և ախուհը Աբգարեանի աղայի խորին զգացումով ա-սած խօսքերը և աղօթքը իր անկեղծութեամբ արձագանք գտաւ և իմ հոգու մէջ և դրա հա-մար էլ սրբազան պարտականութիւնս եմ հա-մարում միաջնել նրան և իմ զգացմունքները։ Ինձ վիճակված չէ եղել հանգուցեալին հետ անձամբ ծանօթ լինել և Շուշում իմ կարճա-տե բնակութեան ժամանակ ճանաչելու նրա յատկութիւնը, բայց ներկայ լինելով այսպի-սի թաղման տարու հանգիսին, ես ցանկա-նում եմ միայն արտայայտել յարգանքս հայ և մահմեդական հասարակութեան, միասնալով նրանց վշտին և ախտութեան և դրա համար էլ հեռու եմ եղել այսօր ժողովուրդին որ և է կենդանի խօսք ուղղելու մաքից այս առձա-րի սրբազան կամարի տակ, բայց քաղցները իմ մէջ էլ զարթեցրին խորին զգացմունք և միտք այս անկեղծ տեսարանի առաջ։

Մեր լաւ յարաբերութիւնները միջև ներկայ փաստական օրինակը հասարակ ամբողջ հա-մար աւելի խրատական է, քան թէ յօգուտ միութեան երկացող միւս տեսական ջանքերը։ Տայ Աստուած, որ շատ լինեն մահմեդական-ների և հայերի մէջ այդպիսի լաւ մարդիկ և մեծ լինի կրթված հոգեւորականների քանա-կութիւնը երկու ազգերի մէջ, որպէս զի նը-րանք շարունակ քաղաքի ժողովուրդական սէր և միութիւն։ Հայ հասարակութեամբ կողմից, պ. պ. մահմեդականներ, ընդունեցէք իմ խո-րին շնորհակալութիւնս։

Իս. Շահիբեգով

ՆԱՄԱԿ ԵՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Վարդկավակագ, յուլիսի 6-ին
Թոյլ տուէք, խնդրում եմ, «Մշակ» միջո-ցով շնորհակալութիւնս յայտնելու տեղիս այն յարգելի տիկիններին, որոնք յանձն առան յօգուտ Նախիջևանի թշնամների, բացի դրանից նաև հագուստ ժողովելու, որ այդ իրերը ամսին 18-ին 3 արկիւնքով ուղարկեցի Երևան, արժ. Կարապետ վարդա-պետին՝ ուղարկելու Նախիջևան — Թովմաս վարդապետին, որին ուղարկել եմ նաև փողը —498 ռուբլի։

Յ. Բ. Ստեփանյան

ՆԵՐՓԻՆ ԼՈՒՐԵՐ

«Южн. Тел.» լրագրի տեսիլով, մէնատօր Կուզմիսկու վերաբնութեան արդիւնքը Բագ-ւում և Բագուի նահանգում հետեւեալ արդիւնքն է տուել. Բագուում, կայսրութեան ամենահա-րուստ քաղաքներից մէկում, դանձարանք դա-տարի է, քաղաքի կարիքների համար փոխ-նի վերցնում առանձին նպատակների համար նշանակված գումարներից։ Գաղաքի առողջա-պահիկ դրութիւնը շատ վատ է, տնտեսու-թիւնն անկարգ ու անսխառն է։ Միակ փայ-լուն բանը կրթիչական գործն է։ Բանւորական հարցը չափազանց աննօրմալ դրութեան մէջ է։ Զը կայ ոչ մի կանոնաւոր կազմակերպու-թիւն բանւորների և գործարանատէրերի յարա-նկով երկրում։ Այդ գործադուլները ամեն տեղ քաղաքական բնաւորութիւն են կրում։

Կովկասում, քաղաքական կուսակցութիւն-ները՝ այսօր համակերպվում ենհետեւեալ նուա-զագոյն պրօգրամին։ Նրանք պահանջում են—պէտք է խոստովանել, որ նրանց պահանջը չափազանց չէ—նոյն պատմութիւնները վայե-լի, որ գոյութիւն ունեն Ռուսաստանի միա-ցեալ մասում։ Կովկասում նոյն իսկ գէմալօ. բայիցի այդ պահանջում են ոռոս Ազգային Ժո-ղովի համար պատգամաւորներ ընտրելու ի-րաւունքը, մերձաւոր ապագայում, երբ իրա-կանայայ Ազգային Ժողովը։ Պահանջում են ճանաչել կովկասեան այլ և այլ լեզուների օ-րինաւորութիւնը, բաց անել հայոց զարոց-ները, վերադառնալ հայ եկեղեցական կա-լուածները, երգուեսլ դասաւորների, յար-ի հաստատումը քրեական գործերում, և ընտ-րութիւնը յարի անդամների ըստ ազգու-թիւնների. (այն երկրում, ուր այնքան այլա-ղան են ցեղերը. անմիջապէս աչքի է ընկ-նում թէ ինչպէս համար տեղացիները պահան-ջում են այդ բարենորոգումը և ինչպէս ոռոս իշխանութիւնները միշտ մերժել են)։ Գիւղա-ցիները պահանջում են պետական հողերի բա-

բերութիւնները և ծագած թիւրիմացութիւն-ները քննելու համար։ Բանւորների բնակա-րաններն անտանելի վիճակի են, թէ վաղուց բողոքներ կան դրա դէմ։ Դիւղացիական գոր-ծը կատարեալ քառասական վիճակի մէջ է։ Դիւղացիների հողաբաժինների պարտաւորա-կան յետ գնումը գոյութիւն չունի։ Անտառներից օգտվելու հարցը չափազանց դժուար է առ-տառական պահապանների գործած ապօրէն վարմունքների պատճառով։

Շուշուցի օրերը Հ. Տէր Միքայէլեան խնդրե-ր ներկայացրել զարոցական շրջանային վար-չութեան, որ թոյլատրվի իրան Շուշում իր ունեցած տարրական դպրոցը վերածել I կար-գի դպրոցի կամ գիմնազիայի։ Դպրոցական շրջանային վարչութիւնը օրերուդէ այդ խնդրը յանձնել էր Կովկասի դպրոցական շրջանի պ. հոգաբարձուին։ Այժմ, ինչպէս լուրս ենք հաս-տած աղբիւրից, պ. հոգաբարձուն սկզբունքով ոչինչ դէմ չունենալով ոչ նախաձեռնողի ան-ձնաւորութեան, ոչ էլ գործի դէմ որեւէ առար-կութիւն, թոյլատրել է օրերուդէն բաց անել գիմնազիա Շուշում։

Յուլիսի 10-ին Բագուի բանդում գտնվող Մարտիրոս Զարիշեանին և Սալաւոր Յով-հաննիսեանցին յանձնվեց մեղադրական ակտը, որով յայտնվում է նրանց, որ ենթարկվելու են զինուորական դատաստանի, համաձայն պատժական օրէնսդրել 1457-դ յօդուածի երկ-րորդ մասի (մեղադրվում են նախկին նահա-նգապետ իշխան Նախիջևանի սպանելու պատ-րաստվելու մէջ), իսկ, ինչպէս ասում է «Ба-кы» լրագրից, Յովհաննիսեան Սալաւորը, բացի դրանից մեղադրվում է նաև համա-ձայն 1459 յօդուածի երկրորդ մասի (բռն-վելու ժամանակ զօրօգովին սպանելու փորձ անելու համար)։

Բագուցի վաճառական Յարութիւն Բաբայեան Բագուի գնեկաւ-նահանգապետին մի յայտա-գիր է ներկայացրել հետեւեալ բովանդակու-թիւնով. յուլիսի 7-ին ինքն անցնելիս է լի-նում ցերեկվայ ժամը 3 ին, Կօլիւբակիսկի փողոցով։ Մայրական այգում դուրս են գալիս կապաններ իրանց պահակից, մտնում Թու-մայիվի տան մօտով անցնող երեսը կապած մի հիւսիկը անձի, կոպտութիւնով բռնում նը-րան քիչ է մնում որ նրան գետին գլորեն, և հանում նրա գրպանից թաղիկնակով փաթա-թած առքանակը, կապաններից մէկը դնում է իր կօշիկի մէջ և հեռանում են բոլորը։ Բաբայեանը հարցնում է կապաններին, թէ ինչպէս իւրացնում են առքանակը և յանցա-ւորին բաց թողնում. նրանք պարտական են իսկոյն ոստիկանատուն տանել. կապանները վաճառականի այդ միջամտութեանը պատաս-խանում են կոպիտ ու բարձր ձայնով, և միայն Բաբայեանի երկար պնդելու պատճա-ռով կամ նրանից վախեցած, յիշված անձին տարած... Աստուած գիտէ ուր։ («Багы»)

Նախիջևանի աղէտի դոհերի օգտին ստա-ցանք մի խումբ օրերուդէներից և տիկիններից Խ. Հովսեփին Զինալիբեանի ձեռքով հաւա-քած 5 ռ. 50 կ. նուրբատուններն են. Կուս. Հ. Զինալիբեան 1 ռ., Ա. Բախչինեանց 50 կ.,

ժամումը, կամ նրանց վարձումը տարեկան վճարներով միմիայն տեղացիների և ոչ թէ ոռոս գաղթականների կողմից, գիւղատնտեսա-կան բանկերի հաստատումը փոքր տոկոսնե-րով, և մասնաւոր քիչ ձեւակաւութիւններով (օրինական ձեւակաւութիւնները, այսօր այնքա բարդ, արգելք են լինում գիւղացուն, օգտվելու գոյութիւն ունեցող այդ կարգի բանկերից), պահանջում են իրաւունք հա-մայնեցիների և գաւառներին համար իրանք ի-րանց կողմից ընտրելու իրանց վարիչները վերջապէս պահանջում են նախնական ցնե-ղուբայի վերացումը։

Նրանց՝ որ ինձ պարզում էին այս պրօգ-րամը, ես հարց տուի թէ ձգտում են և հեռա-ւոր յոյս ունեն Կովկասը բաժանել Ռուսաս-տանից և կազմել քաղաքական մի անկախ պետութիւն։ Ո՛չ, ամենեւին ոչ։ Ո՛չ որ չէ ցանկանում բաժանվել, բացի գուցէ մի քանի լեռնականներից, անընկճելի և մահմեդական որոնց, ասենք, ոչ որ չէ խանգարում իրանց լեռներում։ Այնպիսի մի երկրում, ուր այնքան ցեղեր կողք կողքի են ապրում և իրար ա-տոււ, բաժանումը կը ստեղծէր մի շատ աւելի վատթար անիշխանական դրութիւն, քան ներ-կայ դրութիւնը։

1. Հովհաննէս 50 Կ., Կ. Բրթնանց 1 ր., Դ. Սի-
լախարան 40 Կ., Շահապանց 30 Կ., օր.
Ա. Յարութեան 25 Կ., օր. Ա. Մեհրա-
բեան 25 Կ., տ.տ. Մ. Ղարթուլ 10 Կ., Ս. Յո-
ղոյն 10 Կ., Կ. Առլեան 50 Կ., Հ. Դալա-
կեան 60 Կ.:

Մեզ հաղորդում են որ Ալեքսանդրօպօլից
Նախիջևան գնացած սահմանադրական խումբը,
բժիշկ Տէր Սահակեանի և բժիշկ Թ. Ասլանեա-
նի ղեկավարութեամբ, Նախիջևանում գործել
է մօտ 3 շաբաթ, բժշկական եւ տնտեսական
օգնութիւն է հասցնել 50-ի չափ ծանր ու թիթե-
կաւորներին, չոր հաշւած բազմաթիւ երթեւեկ
հիւանդները: Բայց որովհետեւ և սահմանադ-
րական խումբը, բաղկացած լինելով մօտ 10
հոգուց, բաւական մեծ ծախք էր պահանջում
և որովհետեւ հիւանդները թիւը արդէն եղել էր
3 ծանր վերաւորներ և 10-ի չափ երթեւեկ
թէթեկ հիւանդներ, այդ պատճառով լաւ հա-
մարվեց յիշված 3-ին գետնի վերաւորական
հիւանդները, իսկ մնացեալները բժշկութիւնը
յանձնել պ. Գրաւսկիին և հիւանդանոցը փա-
կել ու հեռանալ: Բայց բարեբախտաբար այդ
ժամանակ տեղ հասաւ Թիֆլիսի սահմանադ-
րական օժանդակ խումբը, որին և յանձնվեց
հիւանդանոցը ղեկավարութեամբ բժիշկ Գրա-
ւսկիին:

Մեզ հաղորդում են, որ Պարբեզում այս
տարվայ ապրիլի 7—17-ին (նոր տօմար) կա-
յացած միջազգային կուլիւրալական ցուցա-
հանդէսին Կովկասից մասնակցող անձերից,
բացի պ. Գ. Անարդանեանը, որի մասին ար-
դէն հաղորդել էինք, մէկընդմիջ ստացել են
և հետեւեալ թիֆլիսցի անձերը. 1) «Լեւ» ա-
ռուարական տան ծխախոտի գործարանը—
Սուկէ մեղայ, 2) Ն. Յ. Սահակեան—լաւ տե-
սակի գինու համար—Սուկէ մեղայ, 3) Զ. և
Ի. Սլեքսանդրօպօլսի, գինու և արագի համար—
Սուկէ մեղայ, և 4) Ի. Ն. Բիւլգէրէի—Կոպաձէ
գինու և արագի համար—արծաթի մեղայ:

Բաթումի կայարանում մարդատար գնացքի
բազմաթիւ բաժնու ժամադրմանը գտել են
յուլիսի 6-ին մի քանի կապակած թիւեր,
որ ուղարկվում էին Թիֆլիս իբր բազմա-
Արկիւնը բաց են անում և երեւում է, որ
նրանց մէջ հրացաններ, ատրճանակներ և մեծ
քանակութեամբ փամփուռներ են: Ի հարկէ
այդ իբրերը ձեռքաւորվում են, բայց ոչ ոք
վրա կապակած չէ ընկած—տէքն անյայտ է:

ՈՒՆԵՆՆՈՐԱՆԵՆԻՑ մեծ գրում են. «Ինչ
էր Ուկրա-Նորաշինը նախ քան մայիսեան ա-
գետաւի դէպքերը և ի՞նչ է ներկայացնում նա
այժմ. կատարեալ հակապատկեր: Այն շքեղ
և հարուստ գիւղը, որը իսկապէս մի հատ էր
ամբողջ գաւառում, իր գեղեցիկ շինութիւն-
ներով, այժմ ներկայացնում է իրանից փրա-
տակներ մի կոյտ: Ահա ձեզ ասիական բար-
բարոյութիւնների կատարեալ պատկեր: Մի
գաղտնի սարափ է ազդում և ցնցում մարդու
ձիւղը, երբ շրջում է փրատակների տակ: Տը-
նեւում այրված կենդանիների և մոխրի դար-
ձահողութիւնից օդը խեղդէ և դառն: Ժողո-
վորը զրկված է բառիս բուն նշանակութեամբ
ամեն ինչից: Չը նայած, որ այստեղի մի
խումբ պլաստիկները քիչ ապահովութիւն են
ներշնչում ժողովրդին, բայց երկրագործական
գործիք չը լինելու պատճառով ժողովուրդը
անկարող է սկսել դաշտային աշխատանքը:
Ահա մի ամբողջ ամիս է, որ ժողովուրդը այս
սովալի բերութեան մէջ է գտնվում: Նախա-
կան պահանջներից ամենակարեւորն է՝ շու-
տափողի փողի օժանդակութիւն անակներ
շինելու և պատասպարելու արեւի և անձրեւի
տակ տառապող ընտանիքներին, ամեն տեսակ
երկրագործական և անային անհրաժեշտ գոր-
ծիքներ և տաւարներ աճելու ու վերականգնու-
ղաշտային աշխատանքը, որպէս զի մօտիկ
ապագայում սովածան չը լինեն և քիչ թէ շատ
կազմակերպ իրանց բայցայլած անտեսական
գործիքներ: Այժմ տեղական ոստիկանութիւնը
հաւաքում է թուրք գիւղերից աւարի մի մա-
սը, բայց մաքուր ու թանկագին իրերի փո-
խարէն՝ մաշված, կեղտոտ կտրուկ իրեր:
Տեղական մի վստահելի թուրքի ասելով՝ տա-
ւարը և թանկագին ապրանքները չնչին գնե-
րով ծախված են և անցկացրած սահմանից»:

Հին-ՆԱՆԻՉԻՆԻՑ մեծ գրում են. «Ժո-
ղովուրդը վերադարձել է իրանց տները, բայց
գուրկ է ամեն մի միջոցից. չը նայած պրինց
Նապօլեօնի հրամանին, յուլիսի 17-ից, որ
մինչև հինգ օրը հայերի թաւանները վերա-

դարձնեն, բայց դեռ ցայժմ ոչ մի չուի չի վե-
րադարձվել. գիւղատնտեսական գործիքներ
չեկ կան, գոնէ դաշտերում գործը ուսուցիչ
ներու. ժողովուրդը ապրում է ցամաք հացով
և ցորենի եփած հատիկներով (իլլալով), թա-
ւանի ամենաչնչին մասը յետ է տուած ջա-
կեցի հայերին: Այդ էլ ջանկեցի հայերը ստա-
ցան շնորհիւ այն բանի, որ թաւանողները
իրանց գիւղացի թուրքերն են եղել, և իրանց
ուճեցածին մեծ մասը Ջահկում է գտնվել, իսկ
ուրիշ գիւղացի հայեր դեռ ոչինչ չեն ստացել:
Դրութիւնը անտանելի է, մասնաւոր մեծ
երկուշիւ մէջ են ջանկեցի հայերը, որոնք վե-
տեղված են Ջահկում ներքեւ հայոց թաղում,
այնպէս, որ իւրաքանչիւր բաղում 3—4 ըն-
տանիք է գտնվում, դռներ պատուհաններ չը
կան, թուրքերը սպառնական դերը ունեն հա-
յերի դէմ, նրանք գեղեցիկ կերպով զինված
են և ենթադրելով, մի գուցէ հայ ֆիդայիներ
յարձակվեն դէպի վրա, սարսափելի դերը են
ստրբել: Ամենաչնչին դէպքը կարող է յար-
ձակվան առիթ դառնալ, և թուրքերի մէջ էլ
նոյն իսկ շուռկոյն կան, իբր թէ պէտք է
ցանքսերը հաւաքելուց յետոյ նորից յար-
ձակողական դերը բռնեն: Նախիջևանից
զէպի հիւսիս գտնվող բոլոր հայաբնակ գիւ-
ղերի կործանման պատճառը ջահկեցի թուր-
քերն են եղել (Ջահկում 600-ից աւելի
ընտանիք թուրք կա): Եթէ դրութիւնը
այդպէս շարունակվի Ջահկում դժուար թէ
հայութիւն հաստատվի, և որովհետեւ մօ-
տիկ հարեան հայերը առևտուր ունեն Ջահ-
կի հետ, շնորհիւ ջահկեցի հայերի, Ջահկում
հայ չեղած դէպքում նրանք նւթապէս կարող
են ընկնել վրա բարեբախտ յարձակման են-
թարկվել և գաղթել մասնաւոր Նազարաբաթ
գիւղը, որի շուրջ Ջահկի կողքից է անցնում:
Եւ բացի այդ Դարալագին և Դարաբաթ ա-
ռուարում ունի Նախիջևանի գաւառի հետ Ջահ-
կի միջոցով դարձեալ աշխուղի հայերի շնոր-
հիւ, հակառակ դէպքում ամբողջ միջ երկրին-
քի առևտուրը կը խանգարվի, ինչպէս այժմ
խանգարված է, և Ջահկի կը դառնայ աւա-
զակային մի օրը, ուր ոչ ոք հայերից չի հա-
մարձակվի ներս մտնել և մտնողն էլ ողջ դուրս
չի գալ: Ահա այդ հանգամանքները աչքի ա-
ռալ ունենալով, որ հայերի աշխատանք ենք
Ջահկից դուրս հայաբնակ դարձնել, կուտակ-
ութեամբ դիմելով, այսինքն Չնաբերթի, Բա-
դախի և Սալխալի հայերին տեղափոխելով
Ջահկի, իսկ թուրքերին առաջնորդել տեղը,
նախապէս ջահկեցի թուրքերի դէմ, որպէս
անհնազանդ առաջակներ, բոլոր կազմելով
դարալագինացիներին և սիւրհանցիներին կող-
մից: Եթէ այդ ծրագիրը անիրագործելի լինի,
այն ժամանակ պէտք է Ջահկի հայերին բա-
ժանել թուրքերից. յամենայն դէպս պէտք է
աշխատել որքան կարելի է, Ջահկի նման,
վայելուչ և գաղտնի գիւղաբաղաւթը, ուր 4—5
հազար բնակիչ կա, չը թուրքացնել»:

ԳԱՆԻ-ԲԱՍՍԱՐԻՑ մեծ գրում են. «Չը նա-
յելով որ երևանեան նահանգի իրաւական դրու-
թեան մէջ յայտարարելուց յետոյ, մասնաւորապէս
ներքեւ պարբերական յարձակումները դադարել են
հայկական գիւղերի վրա, բայց այնուամենայ-
նիւ նրանք դեռ ևս չեն դադարում, գեղուկի ա-
նասունները թման տակից հանել և տանել,
կամ յարմար միջոցին պատահած հային ա-
ռանձնացնել, և հողի տակ ծածկել: Փաստը
շատ կան: Մի քանի օր առաջ, Իււմ գիւղի
հանդէ մէջ ցորենի խճճերով բարձրած սայլի
լծան առակից, արձակում են, հայի անասուն-
ները, շխարհից թուրքերը և տանում: Բզո-
վան գիւղի էլի հանդում երկու մասնաբաժան,
մօտենում են, եղները արձակում ու տանում,
եղները մէկը փախչում, վալիս է գիւղը, իսկ
միւսը ընդում տանում են: Չանջուր գիւղի
սահմանում (Դարալագինի գաւառ) երկու
թուրք յարձակվում են յիշեալ գիւղի բնա-
նայի վրա, ձեռքից խլում հրացանը, սպանու-
թեամբ խանգարում են ուրիշ ձանադներ,
թուրքերը թողնում փախչում են վերցնելով
միայն հրացանը: Հայկական գիւղերից ժամա-
նակաւոր հեռացող մասնաբաժանները (որոնք
փորձաւորներ թուրքն են ինչ կազմում) կամաց-կա-
մաց վերադառնում են իրանց բնակավայրերը:
Պարսիկը իր կրքերին բաւականութեւն տալու
համար ժամանակի և միջոցի մէջ խտրութիւն
դնել չը գիտէ: Հայ գիւղերից հեռացած մա-
նաբաժանները, իրանց հաւատակիցներին մօտ
ապաստան գտած միջոցին, խեղճեր կանանց
անխաբի բողբոջն լլկել, և բնաբերել
են, եղել է և մի քանի կանանց
փախուստ օտար աղամարդկանց հետ: Այս
վերջին տեսակի դէպքերը պատահել են այն

կանանց հետ, որոնց, տղամարդիկ յանձնել
են ուրիշներին խնամքի, իսկ իրանք մասնա-
ցել են յարձակումներին, հայկական գիւղերի
վրա: Իսկ մի ֆանատիկոս հալիի երկու կա-
նանցից, երբ մէկին օրերով անյայտացրել են
թուրքերը, հալին ասել է. «վերադառնա՛նք
հայերի մօտ, էլի եմ իրաւ հայերին»: Հոռնան
սկսվել է: Շինական գաղջուկի միակ յոյսը,
այս տարի կազմում է հացահատիկը: Այս
տարի արեան և սարսափի օրերը թոյլ չը
տուրն գիւղացուն ժամանակին դուրս գալ
դաշտը, հսկելու իր վար ու ցանքի վրա: Բա-
բակը մնաց առանց քաղհանելու, և աւելորդ
խտերի մէջ թունաւորվեց ու փչացաւ, մա-
սամբ մշակվածներն էլ, այժմվանից «չու-
սել է: Այգիները վերջին տարիները, չը նայած
գոհացուցիչ առատ բերք են տալիս, բայց
այդեանքը որոշ ապահովեցուցիչ արդիւնք չէ
ստանում, շնորհիւ ինչպէս խաղողի նմանապէս
գինու վերին աստիճանի էժան ծախվելուն,
օրինակի համար ներկայումս գինու 0/0-ը
ծախվում է 4—4½ կօպէկով ասել է թէ 100/0
ունեցող գինու վերջում արժէ 40—45 կօպէկ,
այսպէս աստիճանաբար: Գառնի-Բասարում
հացահատիկի մշակութիւնը քիչ տարածու-
թիւն է բռնում, ներկայումս ալիւրի պուրը
ծախվում է 1 ր. 60 Կ.:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Էջիածին «Արարատ» ամսագրի մէջ տպված
է Գ. Պօլի «Բիւզանդիօն» լրագրից քաղված
հետեւեալ լուրը.

«Եթովպիոյ հոգեւոր հովիւ Տէր Մկրտիչ
քահանայ Չրդատեանը հասել է Հաբար, ուր
հայ գաղթականների մի մեծ թիւ երկու ժա-
մուայ ճանապարհ դիմաւորել են նրան: Տէր
Մկրտիչը Հաբար հասնելուց յետոյ իշխանի է
Հրատմ Միսնանին բնակարանը:

Հաբար հասնելուց մի օր յետոյ իւր գալու-
սեան մասին տեղեկացրել է փոխարքային:
Նորին վսեմութիւնը փափաք է յայտնել տե-
նելու քահանային, որը շատապէս է մի քանի
հայերի ընկերակցութեամբ ներկայանալ նրան
իւր ապարանքում: Ընդունելութիւնը եղել է
շատ սիրալիր: Հետեւեալ օրը փոխարքան իւր
քահանայապետին ու անձնական թարգմանին
ուղարկել է փոխարքայի այցելութեան: Աւագ
հինգշաբթի օրը փոխարքայի հրաւերանք
Մկրտիչ քահանային գնացել է Եթովպական
եկեղեցին, ուր փոխարքան նստեցրել է իւր
կողքը: Այդ օրը շատ յառաջիկա ամիսի վրայ,
մեծ ուրախութեւն պատճառելով եթովպացի-
ներին:

Աւագ շաբաթ օրը փոխարքայի պալատի
առջև կատարուել է եկեղեցական հանդէս և
Տ. Մկրտիչ քաղմիւլ է դարձեալ փոխարքայի
աջ կողմը: Հանդիսի վերջը փոխարքան դափ-
նի երկու բարունակ է նուիրել քահանային
և հրաւերել երկուսին ճրագաւորելու, որի-
նեղից են եղել տեղութեան հիւպատոսները:
Ապրիլի 23-ին Մկրտիչ քահանայ կրկին այ-
ցելել է փոխարքային և գինուրդներ ստանա-
լով իբր հետեւորդ, մեկնել է Հաբէշտանի
ներսը»:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՆ ԳՈՐԵՆԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

12 յուլիսի
ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Ինֆանտերիայի գեներալ
Լինեվիչի ամենահպատակ հեռագիրը 1905 թ.
յուլիսի 11-ին: «Դէ-Կատարից հաղորդում են,
որ կէսօրից յետոյ ժամը 4-ին մօտեցան եր-
կու աղանաւ, գնդակահարեցին կայանը և
հեռացան»:

ՄԻՄԵՆՈՐՈՒԼ, 12 յուլիսի: Բանակի գե-
նալոր անցող փախան մի խումբ կայանա-
ւորներ: Փորված գետնի հանգամանքը դեռ ևս
գաղտնի է,

ՏԵՄԵՆՈՒՆ, 12 յուլիսի: Յուլիսի 8-ին հը-
րատարակված կայսերական մի կարեւոր հրա-
մանով չինական բոլոր զօրքերի մէջ եղած ութ
զօրաւորներից գործածութիւնից հանվել են ա-
ղիւնները և նոյնպէս հին ձեռքի գնդը և համա-
գնդերը: Զօրքերը կը սպառազինվեն ամենա-
նոր ձեռքի գնդերով: Այդ բարենորոգումն Նա-
պօնայի աղիւնների հետեւանքն է:

ԲԵՐԼԻՆ, 11 յուլիսի: «Local-Anzeiger»-ը
երկու Միտլախերի տեսակցութեան առթիւ
գրված մի ներշնչված յօդուածում ասում է,
որ նրանց միջև զոյուլիսն ունեցող բարեկա-
մութեան շնորհիւ, կայսրը մեծ բաւականու-
թեամբ ընդունեց տեսակցութեան հնարաւո-
րութիւնը: Նորին մեծութիւնը ուրախ կը լի-
նի տեսնելու Յարին երկար և դէպքերով բո-
լորովին հարուստ ժամանակամիջոցից յետոյ:
Անգլիական և ֆրանսիական մամուլի այն են-

թաղութիւնը, իբր թէ կայսրը բարի
խորհուրդներ պէտք է տալ Յարին, ինչ-
պէս երկրի այնպէս էլ Հեռու-Արեւելքի խա-
ղաղութեան վերականգնման վերաբերմամբ
զուրկ են հիմքից: Կայսրը միշտ բացասել
է ուրիշներից իրան վերադրվող այն
ձգտումները հարեան տէրութիւնների ներ-
քին գործերում խառնվելու, հենց այդպէս
էլ նա կը վարվի այդ դէպքում: Եթէ
Յարը նրա կարծիքը հարցնի, ենթա-
դրում են, որ կայսրը կը յայտնի այն միտքը,
որ իշխանութեան պրնապիլը և երկրի խաղա-
ղութիւնը կարող են միայն հաստատվել Մի-
ապետի և ժողովրդի միմեանց վերաբերմամբ
տաժած փոխադարձ վստահութեամբ: Ինչ վե-
րաբերում է խաղաղութեան, բոլորին էլ յայտ-
նի է, թէ կայսրը ինչպիսի կենդանի մասնակ-
ցութիւն ունէր խաղաղութեան բանակցու-
թիւնների նախնական գործողութիւնների մէջ:
Բայց ի նկատի ունենալով, կարելի է համոզ-
ված լինել, որ շահողը խաղաղութիւնը կը
լինի: Իշխան Բիւլովի և գրաֆ Լամպորթի
բացակայութիւնն էլ մասնացոյց է անում տե-
սակցութեան մասնաւոր և բարեկամական բը-
նաւորութեան վրա:

ԲԵՐԼԻՆ, 11 յուլիսի: Բանակի Մեղեւոսը,
որ երկար խօսակցութիւն է ունեցել Վիտտելի
հետ երկաթուղու արտակարգ գնացքի մէջ
նրա վերջին ճանապարհորդութեան ժամանակ,
անյայտ դժնապարկից դէպի Նօրբերնէյ
իշխան Բիւլովի հետ խորհրդակցելու: Ենթա-
դրում են, որ գործը վերաբերում է առևտրական
փոխառութեանը, որ պէտք է կնքվի Գերմա-
նիայում և Ֆրանսիայում:

13 յուլիսի
ՊԱՐԻՅ, 13 յուլիսի: Երէկ Բուլիէն Վիտ-
տելին ընդունեց իր մօտ: Տեսակցութիւնը տե-
ւեց մօտ մէկ ժամ: Այսօր առաւօտեան Վիտ-
տէն մեկնում է Պարիզից:

ԿԻՆՎ, 12 յուլիսի: Տիբեկվայ ժամը 5-ին
առաջացաւ սաստիկ մրրիկ, որը սկսվեց որոտ-
մունքով: Փողոցներում շուրջ գետի պէս հո-
սում էր՝ մի ասօքն խորութեամբ: Դառաւ
կենտրոնում գլխաւոր փողոցի վրա լրատու
են եղել մի քանի տասնեակ խառնուրդ
ձուրը մայիսից հինգ չորրորդական բարձր
էր կանգնած: Փողոցների սալայատակը բա-
րուբանդ է եղած: Մրրիկը քիչ անհո-
ճանք: Մարդկային զոհեր կան: Փոթորիկը
շարունակվեց բաւական քաղ:

ԲԵՐԼԻՆ, 12 յուլիսի: «Local Anzeiger»-ը
մի ներշնչված յօդուածում գրում է Կայսրնե-
րի տեսակցութեան առթիւ, որ թէկու՛ղ նրանց
խօսակցութեան բովանդակութիւնից ոչինչ
յայտնի չէ, սակայն հաստատապէս կարելի է
ասել, որ ընկնում էին շատ հետաքրքիր բա-
ղաքական հարցեր: Երկու Կայսերական ի պարզ
կերպով արտայայտեցին իրանց բաւականու-
թեւնը այցելութեան հետեւանքի առթիւ:

ԼՈՒՆԴՈՆ, 12 յուլիսի: Լօրդերի պալատը:
Այն հարցին, որ վերաբերում էր գերմանական
սինդիկատի վալլուում ձեռք բերած առուխի
վայրերին, Լանդօունը կրկնեց համայնքի
պալատում արած իր յայտարարութիւնը, որ
առաջնաբերը դուրս են գտնվում քաղաքի
շահագործութեան ներկայ սահմանից: Այդ
հանքերը գտնուել չէ աղբի անգլիական նաւա-
տորմի վառելիք մատակարարում:

ՄԱՐԻԻԻ, 12 յուլիսի: Թագաւորը յետա-
ձգեց իր ճանապարհորդութիւնը դէպի Բեռ-
լին: Այդ հանգամանքը բացատրվում է նրա՝
դէպի Ֆրանսիան տաժած առանձին ուղադ-
րութեամբ, որովհետեւ թագաւորի Բեռլին գը-
նալու համար որոշած սկզբնական ժամանակը
ընկնում էր Մեղեւի տօնի օրը:

ՀՈՒՄ, 12 յուլիսի: Իտալական կառավա-
րութիւնը յանձնեց Բ. Դոստը մի ազդու յայ-
տագիր Կարմիր ծովի ծովահններին գործո-
ղութիւնների ձեռք վերաբերմամբ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Հրատարակված է կօմիցիտ
մուսաստանի և Դաւանայի միջև լինելի պար-
տադիր միջնորդ կատարանի մասին: Եւպո-
նացիները դէմ կատարած գործերի մէջ իր
ունեցած աշղոյթեան համար գնեւորալ էյա-
տեանաւ Միովը արժանացել է ինֆանտե-
րիայի գնեւորալ աստիճանին:

ԿԻՆՎ, 12 յուլիսի: Այստեղ ժամանեց դիւ-
ւորական իրական հիմնարկութիւնների գը-
լաւոր Մեծ Իշխան Կոնստանդին Կոնստան-
դինովիչը: Նորին Մեծութիւնը կը բնակի
գնեւորական ուսումնաւորալ լազարում և կը
մնայ այստեղ մինչև յուլիսի 14-ը:

ՏՈՒՐԻՆ, 12 յուլիսի: Լօմօրթից հեռագրում
են, որ Սալալիում գերի վերցրված 464
առևանգը ուղարկված են Պօրաշինո: Պատե-
րազմական գործողութիւններին չը մասնակ-

